ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- ---------- 2021 թվականի №---Ա

քաղ. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԻ ՇԱՐՔ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԱՐԵՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՍԱՐՔԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Երևանի քաղաքապետարանի կողմից 2021 թվականի մարտի 17-ին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն ներկայացված N42/5810 գրության համաձայն՝ Երևանի քաղաքապետարանը Եվրոպական Միության հետ համատեղ իրականացնում է «Եվրոպական Միությունը Երևանի համար. Արևային համայնք» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որի շրջանակում նախատեսվում է Երևան քաղաքի 104 բազմաբնակարան շենքերի (համաձայն հավելվածի) տանիքներին տեղադրել արևային ֆոտովոլտային համակարգեր՝ ապահովելով տվյալ շենքերի վերելակների, ներշենքային և աստիճանավանդակային հատվածների, ընդհանուր օգտագործման և բակային տարածքների էլեկտրական էներգիայի մատակարարումը, նպաստելով էներգախնայողության և էներգաարդյունավետության միջոցով բնակչության էլեկտրական էներգիայի գծով ծախսերի կրճատմանը,

բ) «Էներգետիկայի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն՝ սույն որոշման հավելվածում նշված շենքերի համապատասխան բաժանորդները հանդիսանալու են ինքնավար էներգաարտադրողներ,

գ) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 9-ի N344Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առևտրային կանոնների 202-րդ կետի համաձայն՝ վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողների մոտ պետք է

տեղակայված լինեն դարձափոխիչային (ռեվերսային) բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներ, որոնց ձեռքբերման և սպասարկման հետ կապված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի N358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով (այսուհետ՝ Կանոններ) և հանձնաժողովի այլ իրավական ակտերով,

դ) Կանոնների 68-րդ կետի համաձայն՝ սպառողի պահանջով առևտրային հաշվառքի սարքերը փոխարինում է մատակարարը՝ սպառողի գրավոր դիմումի հիման վրա: Նման դեպքում սպառողը պարտավոր է մատակարարին վճարել Կանոնների 69-րդ կետում սահմանված չափով կանխավճար, որի մարումը սկսվում է առևտրային հաշվառքի սարքերի փոխարինումից մեկ տարի հետո՝ սպառած էլեկտրական էներգիայի արժեքից այն նվազեցնելու միջոցով,

ե) Կանոնների 69-րդ կետի համաձայն՝ «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքով նախատեսված՝ վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող ինքնավար էներգաարտադրողի և մատակարարի միջև փոխհոսքերի իրականացման նպատակով միաֆազ հաշվիչը դարձափոխիչային բազմասակագնային միաֆազ հաշվիչով փոխարինելու համար Կանոնների 68-րդ կետով սահմանված կանխավճարի չափը կազմում է 11000 (տասնմեկ հազար) դրամ, իսկ եռաֆազ հաշվիչը դարձափոխիչային բազմասակագնային եռաֆազ հաշվիչով փոխարինելու համար՝ 55000 (հիսունհինգ հազար) դրամ,

զ) Ծրագրի շրջանակում առևտրային հաշվիչները դարձափոխիչային բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներով փոխարինելու համար Կանոնների 68-րդ կետով սահմանված կանխավճարի գումարները սպառողների փոխարեն Երևանի քաղաքապետարանի կողմից վճարվելու դեպքում փոխարինումից մեկ տարի հետո սպառած էլեկտրաէներգիայի արժեքից նվազեցնելու միջոցով կանխավճարի մարման շահառու կհանդիսանան սույն որոշման հավելվածում նշված շենքերի սպառողները և, հետևաբար, Երևանի քաղաքապետարանի կողմից վճարվելու դեպքում վերը նշված կանխավճարների գումարը Երևան քաղաքի համայնքային բյուջե վերադարձման ենթակա չէ: Ըստ այդմ, Երևանի քաղաքապետարանը 2021 թվականի մարտի 17-ի N42/5810 գրությամբ խնդրել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ

բաժնետիրական ընկերությանը՝ Ծրագրի շրջանակում առևտրային հաշվիչները դարձափոխիչային բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներով փոխարինել առանց Կանոնների 68-րդ կետով սահմանված կանխավճարի գումարների գանձման,

է) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը 2021 թվականի մարտի 23-ի ՆԵ-66-21 գրությամբ հայցել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի դիրքորոշումը՝ Ծրագրի շրջանակում առևտրային հաշվիչներն առանց Կանոնների 68-րդ կետով սահմանված կանխավճարի գումարների գանձման դարձափոխիչային բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներով փոխարինելու առնչությամբ, և

հիմք ընդունելով Կանոնների 70.1 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված՝ Երևան քաղաքի 104 բազմաբնակարան շենքերի տանիքներին արևային ֆոտովոլտային համակարգերի տեղադրման համար առևտրային հաշվիչները դարձափոխիչային (ռեվերսային) բազմասակագնային էլեկտրոնային հաշվիչներով փոխարինվում են առանց Կանոնների 68-րդ կետով սահմանված կանխավճարի գումարների գանձման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Երևանի քաղաքապետարանին և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- --------- 2021թ.